

Առ. Խմբագրութիւնն ՍԻՕՆԻ

Երկու անդամէ որ Մատիս պատուական լրագրի (ոչ խմբագրէն շարագրուած) բանասիրական յօդուածոց մէջ ակնարկութիւն կըլլայ, որպէս թէ մենք գիտութեամբ Գեր. Խորէն Եպիսկոպոսի տաղաջափականն մի երկն մէզ աեպհականելով Սիօնի մէջ հրատարակել տուած ենք: Առաջին անդամին անդիտական յարձակում մը համարելով՝ առանց ուշադրութեան թողինք, բայց երբ երկրորդեցաւ ոսյն ակնարկութիւնն թէ առ մէզ և թէ առ Սիօնն՝ ստիպուեցանք հետամուտ ըլլալ, մեր տաղաջափական տետրակներն խառնել, (զորս աշակերտութեան ժամանակէն ՚ի վեր պահպանած եմք) Մասեաց Աղաւնին գտնել եւ համեմատել, որով և երեւեցաւ որ ՚ի գերելման պանդուիդ Հայոց երգն թէ եւ մեր տետրակին մէջ կը գտնուի, բայց մերն չեն եղած, այլ աշակերտութեանըս ժամանակէն օրինակած ըլլալով և երկար տարիներ անցնելուն դատձաւ ուաւ ընդօրինակութիւնն մոռնալով և կարծելով թէ մեր շարագրածն է, Սիօնի մէջ հրատարակել տուած ենք մեր միւս տաղաջափական դրուածոց հետ, զորս դարձեալ նոյն տետրակէն քաղած ենք, և ընթերցողք անշուշտ կարդացած են Սիօնի մէջ:

Ախալմունք մ' է այս, զոր կը խոստովանինք հրապարակաւ և ոսյն սըխալմանքն յայտ է նաեւ անտի, որ նոյն ոտանաւորն տղայութեան հասակի գործ համարելով տեղ տեղ վերըստին սրբագրած եմք և ապա հրատարակութեան տուած: Յաւ է մէզ տեսնել որ Սիօնի խմբագրութիւնն եւս մեր պատճառաւ կը թշնամանուի իբրեւ մեր սիսալման մասնակից: Սիօնի խըմ-

բագրութիւնն Հայոց բոլոր տաղերն, երգերն եւ բանաստեղծութիւններն անգիր սերտած չեր. որ իմանար թէ նոյն երգն Գեր. Խորէնի Եպիսկոպոսինն է և վերատին շը տողագրէր զայն, այսպիսի տարապայման պարտաւորութիւնն եւ ոչ մի խմբագրութենէ կարել է պահանջել:

Արդ մեր սխալումն խոստովանելէն զնի՝ կը խոստովանինք նաեւ, որ մենք ո՛չ բանագողութեան զիջանելու չափ ցածութիւն ունինք և ոչ Գեր. Խորէն Եպիսկոպոսի երկոց վերայ յափշտակուած սիրահարներէն եմք: Եւ թէ բանագողութեան ցած իղձն ունենայինք, ոչ թէ Գեր. Խորէն Եպիսկոպոսի, այլ ուրիշ առաւել բնաձիր, ինքնաբուզն և արտաքին ու ներքին յատկութեամբ կատարեալ քերթրւածներէն կ'առնէնինք և մեր անուամբ կը հրատարակենինք, որով գոնէ մեր ճաշակն ցաց տուած կ'ըլլայինք, թէ կարող ենք ընտրել գեղեցիկն յուրիէն և բնականն անբնականէն: Մենք նոյն երգն, ինչպէս ըսմինք, իբրեւ աշակերտութեան ժամանակի երախայրիք հրատարակութեան տուած եմք և ո՛չ իբրեւ նշանաւոր քերթուած, և սյս հրատարակութիւնն պարզ սխալմունքէ յառաջիսներէն եւ կը խնդրեմք պատուարժան տղայութիւններէն երկտուղ բարեհաձիք հրատարակել Սիօնի միջոցաւ: (1)

Մնամ . . .

Մ. Վ. Կեօլի-կճեան:

(1) Ոյն նամակն հրատարակելով այլ եւս հարկ ըստու Մատիդ Մ. Ն. Ն. Մեծարց յօդուագրի այն խօսքերուն պատասխանել, որով. (ՀՀ